ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ե 40/11-7191
«25» 12 2018թ.

ՀՀ, ք Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝(+374 10) 44-34-80
Հեռ.՝(+374 10) 44-29-04
Հեռ.՝(+374 60) 37-77-37
Հեռ.՝(+374 60) 37-26-56

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան,

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 18.06.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/2 պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր) նախատեսված կարտոֆիլի մատակարարման վերջնաժամկետ է սահմանված 2018թ. դեկտեմբերի 15-ը, սակայն «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսվածից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը չի մատակարարել «կարտոֆիլ» - 37840 կգ: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2018թ. դեկտեմբերի 25-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված Պայմանագիրը՝ 37840 կգ կարտոֆիլի մասով, որի գումարը կազմում է 3745024,8 (երեք միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար քսանչորս ամբողջ 8) ՀՀ դրամ: Նշված գումարի չափով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԲՄԱՊՁԲ-18/2» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 10110775,2 (տաս միլիոն հարյուր տաս հազար յոթ հարյուր յոթանասունհինգ ամբողջ 2) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի վճարման գումարներից ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին կփոխանցի 16853 (տասնվեց հազար ութ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

գանձապետական 900005000758 հաշվեհամարին կփոխանցի 1385580 (մեկ միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովման գումար (10%), հիմք՝ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն-որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի դ) կետ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ ԱՐՏՅՈՄ ՄԽՈՅԱՆ

Կատարող՝
Ա.Առաքելյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին
Հեռ.՝ 060 -37-05-30